

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՈՎԱՍԻՍ

Անապատէն վերջ երկար ովասի՛ս մը վերջապէս:
Ուրեմըն կա՛ս Աստուած իմ, ու կը հսկես քարձրերէն:
Ալ վերջապէս քեզ հասաւ ճի՛շդ սրտիս միայնակ,
Եւ մայուածփիղ գըթառատ շողը ինկաւ անձիս վրայ:

Աւազէն ետք տօթակէզ, ահա ծառեր, եւ շուփեր,
Որոնց ներքեւ մարմինն իմ իր խոնջէնքէն ազատած,
Եւ շըրթներս ալ պապակէն, հիմա անհոգ կը հանգչին.
Զով հով մ՛անուշ կեանքիս մէջ կը բերէ խիմդ ու մանանչ:

Անակնկալ օրհնութեանդ ի՛նչ մեծ նըշան ո՛վ Տէր իմ:
Կը փաբատին ալ ցաւերս. կ'ապափինին հին վերքեր,
Ես կը մոռնամ վատագոյն թոյներն անգութ յուշերուս:

Սակայն խնդրանք մը վերջին, եւ մանկական յոյսի՛ պէս,
Թո՛ղ որ սրտէս կասկածի՝ ցըմահ ամպերն անհետին,
Եւ անապատ մը նորէ՛ն՝ չը դառնայ կեանքը իմին:

ԱՆՆԵԼ